# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

17 օգոստոսի 2021թ. թիվ 1157

Դ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ ԵՎ Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ
ԲԱԶՈՒՄ, ԼՈՌԻ ԲԵՐԴ, ՕՁՈՒՆ, ԱԼԱՎԵՐԴԻ,
ԱԽԹԱԼԱ ԵՎ ՇՆՈՂ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ  եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Դավիթ Մանուչարյանին և նույն վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Վահրամ Ղարսայանին ս/թ օգոստոսի 17-ին մեկ օրով գործուղել Բազում, Լոռի Բերդ, Օձուն, Ալավերդի, Ախթալա և Շնող համայնքներ՝ 2021 թվականի սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքներն ուսումնասիրելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

17/08/2021

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2021թ. օգոստոսի 17
ք.Վանաձոր